ԵՐԵՍՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2923 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ—22—ՅՈՒՆԻՍ—1881 Ն· Տ·—4—ՅՈՒԼԻՍ—1881

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ· Պոլսոյ համր· 10 Մէճ·
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ· Պոլսոյ » 5 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 2 1/2 Լիրա

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ , երկու անգամի համար 2 ղրշ է · աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի ։

ՄԱՍԻՍ
ԼՐԱԳԻՐ

20 Փարայ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

20 Փարայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանբու ծախքը Խմբագրութեան վրայ է ։

Լրագր [illegible] րեալ նամակ կամ որ և ի [illegible] րագիր—Տնօրէնին ալի· [illegible] Պաշճէ—Գարու Ճէլ [illegible] Մասիսի գրասենեան.

Ճան [illegible] ւած նամակ չընդունիր.

Ձեռագրա [illegible] յղուած, եա ետ չեն տրուիր ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական լուրեր. — Խառն լուրեր. — Ազգային լուրեր. — Պետական Դատաստան, (Առաջին նիստ),—Քաղաքական.—Թղթակցութիւն ի Փոքր Հայոց.—Ուսումն Ցանորէնի, (Ա. Տ. Բիւզանդ).—Առաջնորդական տեղապահութեանց արժէքը. — Այլ և այլք. (Շաքար). —Դրամական. —Ծանուցմունք։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 22 ՅՈՒՆԻՍ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Փարիզ 30 յունիս .

Երեսփոխանաց ժողովին մէջ կառավարութեան հարցում եղաւ Օրան գաւառին հարաւակողմն անցած անցից վրայ ։

Առաջին նախարար Պ. Ժիւլ Ֆէրրի մէկ ատենախօսութենէն յետոյ , որ Ճէզայիրի ընդհանուր կառավարիչը պաշտպանեց , ժողովն 220ի դէմ 236 ձայնիւ մերժեց պարսաւի օրակարգն և 194ի դէմ 282 ձայնիւ վստահութեան օրակարգ մ՚ընդունեց ։

Լոնտրա , 30 յունիս .

Երեսփոխանաց ժողովին մէջ երեսփոխան մը ծանոյց թէ վաղը պիտի հարցնէ կառավարութեան թէ , Անգլիա՛ յանուն մարդկութեան իւր ազդեցութիւնը պիտի գործածէ՞ Կ. Պոլսոյ մէջ , որպէս զի պետական դատաստանին մէջ դատապարտելոց մահուան պատիժը չգործադրի ։

Փարիզ 30 յունիս .

Թունուզէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սֆաքսի մէջ (սահմանագլուխ Տրիպոլոյ) խռովութիւնք ծագեր , և բազմաթիւ Եւրոպացիք վիրաւորուեր են ապստամբեալ մոլեռանդներէ ։

Այս առթիւ քանի մը լրագիրք Դուռը պատասխանատու կը բռնեն Ճէզայիրի և Թունուզի մահմետականաց գրգռման , և կը պահանջեն որ Ֆրանսական կառավարութիւնը քանի մը զրահաւոր զրկէ Աֆրիկեան Տրիպոլսոյ ափը ։

Թունուզ 1 յուլիս .

Ֆրանսական զօրք ղրկուեցաւ ըՍֆաքս , որպէս զի խռովութիւնը զըսպելու օգնեն Թունուզի զօրաց ։

Սֆաքսի Ֆրանսական հիւպատոսին թևը կոտրեցաւ ։

Ճէզայիր 1 յուլիս .

Ճէզայիրի Օրան գաւառին Սայտա քաղաքէն տրուած լրոյ նայելով , Արաբ ապստամբապետ Սի—Պու—Ամէմա կը պատրաստուի եղեր նոր ձեռնարկներ ընել Ֆրանսայեաց դէմ ։

Հռոմ 1 յուլիս .

Կը հաստատուի թէ Մէնապրէա զօրավարը Փարիզի դեսպան պիտի անուանուի փոխանակ Չիալտինի զօրավարին ։

Փարիզ 1 յունիս .

Մեծ գրգռութիւն կը պատճառէ այն լուրը թէ Դուռը չորս պատերազմական նաւ և զօրք Տրիպոլիս ղրկելու կը պատրաստուի , մինչդեռ մահմետականաց մոլեռանդը Թունուզի և Ճէզայիրի մէջ ապստամբութիւններ հանելու կ՚աշխատի ։ Լրագիրք կը խնդրեն որ կառավարութիւնն ազդուագոյն գործէ , և ի հարկին նաւատորմ մը ղրկէ Տրիպոլիս.

Թունուզ , 1 յուլիս .

Սֆաքսի առջև գտնուող Ֆրանսական զրահաւորք պիտի ռմբակոծեն յիշեալ քաղաքն , եթէ ապստամբք անմիջապէս չհնազանդին ։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Ուաշինկթըն , 2 յուլիս .

Այս առաւօտ ժամ 9ին երկու անգամ հրացան պարպուեցաւ Միացեալ—Նահանգաց Նախագահ Կարֆիլտ զօրավարին վրայ ։ Վէրքերը ծանր կ՚երևին, բայց կը հաւատան թէ մահացու չեն ։

Մեծ յուզում կայ ։ Ոճրագործը բռնուեցաւ ։

Նոյն թուական .

Նախագահն երկու գնտակ ստացաւ , մին թևէն և միւսը մէջքէն , երբոր նախագահական պալատին դռնէն շոգեկառք նստելու վրայ էր ։ Բժիշկները վերջնական կերպիւ կարծիք չյայտնեցին վէրքերուն ծանրութեան վրայ ։

Ոճրագործը Կուիթօյ անուն անձ մ՚է , Քանատայի սերունդէ , որ Մարսիլիոյ հիւպատոսութեան պաշտօնը խնդրեր է Միացեալ—Նահանգաց կառավարութենէն , և մերժուեր է ։ Կը կարծուի որ այս մարդը խելագարութիւն ունի ։

Նիւ—Եօրք 3 յուլիս .

Ուաշինկթընէն այս առաւօտ եկած լուրերը սուտ կը հանեն նախագահին մահուան լուրն որ ծանուցուած էր սուտ ,

Ոճրագործը քառասուն տարեկան է, Իլլինուա նահանգը ծնած է . Շիքակոյի մէջ փաստաբանի պաշտօն վարած է . սկզբունք չունեցող բաղդախնդիր մ՚է , և համբաւ վաստըկելու յիմար փառասիրութիւնն ունի ։

Հեռագրոյ [illegible] դրուած է ·

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ԱՊՏ-ԻՒԼ-ԱԶԻԶԻ ՍՊԱՆՈՒՄԸ

Այս աւուր Թուրք լրագիրք առատ տեղեկութիւններ կուտան Ապտ—իւլ—Ազիզի սպանման պարագայից վրայ , զորս կ՚ըսեն թէ դատապարտելոց խոստովանութիւններէն քաղած են ։ Դատապարտեալք հիմա կը խոստովանին եղեր ամեն ինչ , բայց պատասխանատուութիւններն իրարու վրայ կը նետեն եղեր ըսելով թէ «հրամանն այն ինչը տուաւ . զէնքն այն ինչը հայթայթեց . ես միայն կամակատար եղայ» , եւն ։ Վագըթ կը պատմէ թէ Ցամատ Մահմուտ փաշա Ցամատ Նուրի փաշայի դէմ ծանր ամբաստանութիւններ կ՚ընէ եղեր , ըսելով թէ «նա՛ էր որ զիս այս գործին ձեռնամուխ ըրաւ . ինք կայսերական պալատան գոհարներն և այլ թանկագին նիւթերը գողնալու զբաղեցաւ , մեզ ալ ոճիր գործել տուաւ ։ Ինք դրամներէ զատ 700,000 ոսկիի արժողութեամբ գոհարեղէն վերցնելէ զատ , Քեալլախանէի քէօշքին կահ կարասիքն ալ իւր ապարանը փոխադրեց , և այժմ այն ժամանակուան կողոպուտներէն մէկ միլիոնէ աւելի ոսկի պատրաստ դըրամ ունի Փարիզի մէջ Պ. Խրիսթաքիի և այլ սեղանաւորաց քով . Նուրի փաշան իւր գողցած գումարներով քէօշքեր և այգիներ շինել տուեր է ի Պալթա լիման , ի Հայտար փաշա , և ագարակներ գընել տուեր է գաւառներին . իսկ Նուրի փաշա Մահմուտ փաշայի համար կ՚ըսէ եղեր թէ Սուլթան Ազիզի սպանման համար գործածուած զմելին Մահմուտ փաշան ինք տըւաւ Մուսթաֆային . և թէ Մահմուտ փաշան ալ մասնակցեցաւ կողոպուտին , և մինչ ինք (Նուրի փաշա) քանի մը կտոր ամօռ և կահ կարասիք միայն վերցուցած էր Քեալլախանէյի քէօշքէն, Ցամատ Մահմուտ փաշան բազում թանկագին նիւթեր գողցաւ ։ Իսկ այն «Անիծեալ» Մէհմէտ Բիւշտի փաշան , «Ցղա՛ռ» ստնեակ մ՚ալ ես չկարդարե՞մ , ըսելով , միշտ կուգայ կահ կարասիք կը վերցնէ եղեր , և թէ ինք ու իւր հարէմն 50,000ական ոսկի բաշխեր են իրենց մէջ այդ կարգի կողոպուտներէ ։ Եւ այս ամբաստանութիւնք տեղի կ՚ունենան եղեր իրարու դէմ սարսափելի հայհոյութեամբք ։ Վագըթ կը յարէ թէ գողութեանց արժէքն առ նուազն 3 միլիոն ոսկի է ։

Նոյն թերթը կը ծանուցանէ նաև թէ հանգուցեալ Սուլթանն աղօթք ընելու կը պատրաստուէր եղեր , և լուացման համար դուրս ելած պահուն Ֆախրի ներս մտնելով սուրը վերցուցեր է . յետոյ երբ «նահատակ»ը կամ «մարտիրոս»ը սենեկին մէկ անկիւնը կ՚երթար Ղուրանն առնելու , Ֆախրի առաջնորդութեամբ հանրածանօթ դահիճք ներս մտեր և իրենց չար դիտումն ի գործ դրեր են ։ Սուլթան Ազիզ օր մը խիստ թանկագին համրիչ մը տուեր է եղեր Ֆախրիին (որ իւր սենեկապետն էր) որպէս զի աղօթք ըրած ժամանակ գործածէ . երբ սպանման պահուն տեսեր է որ նոյն Ֆախրին է իւր թևերը բռնող , գոչեր է երեսն ի վեր . «Ֆախրի՛, Ֆախրի՛, ես միթէ այսպէ՞ս կրթեցի զքեզ . համրիչ քաշելու սահմանուած ձեռքերդ զի՞ս պիտի սպաննեն» ։ Ֆախրին ալ «համբերէ՛, Թագաւորս , համբերէ՛» ըսեր է ։

Վագըթ կը ծանուցանէ իւր երեկուան թուով թէ Սուլթան Ազիզի մայրն իւր որդւոյն սպանման պարագայից նկատմամբ ճշմարտութիւնն երևան հանելուն և արդարութիւն ի գործ դրուելուն համար շնորհակալութեան և բարեմաղթութեան սրտառուչ աղերսագիր մը մատուցեր է Վեհ. Սուլթանին ։

Էվգաֆի Նախարարութիւնն հանգուցեալ վեհապետին գերեզմանին վրայ նոր շալեր դնել տուած է , քովն ալ Ղուրան մը , և նոր վանդակ մը քաշել տուեր է բոլորտիքը ։ Այժմ երկու սեռէ բազմաթիւ անձինք կ՚այցելեն նահատակին դամբարանը ։

Թուրք լրագիրք ամեն օր դամբանական քերթուածներ կը հրատարակեն հանգուցեալ վեհապետին վրայ ։

Վճռաբեկ ատեանը դատապարտելոց նկատմամբ վճռաքննիչ ատեանին տուած որոշումը քննելու կ՚ըզբաղի այժմ Ելտըզի պալատան մէջ ։

* * *

Վեհ. Սուլթանը նիշանը իմթիյազի բարձր պատուանշանը տուաւ Շէյխ—իւլ—իսլամ Էսատ էֆէնտիին ։

—Բ. Դրան և Հելլենական կառավարութեանց միջև ուղղակի կնքուելիք պայմանագիրը շաբաթ օրն ստորագրեցաւ Սէրվէր փաշայի և Պ. Քոնտուրիոթիի կողմէ ։

—Կըսուի թէ Գամիթաքի էֆէնտի , Շէֆիք էֆէնտի և Քեմալ Պէյ հարցաքննիչ որոշուեր են Ալէքսին փաշայի աքսորած Թուրք գլուխներուն ։

—Պէօյիւքտէրէ և Թարապիա բնակող դեսպանք ծանուցագիր մը ղրկած են Բ. առ Դուռն՝ բողոքելով այն կողմերը տիրող անապահովութեան դէմ ։

—Շաբաթ օրը Թարապիոյ մէջ 6 Թուրք զօրականք յարձակում ըրին Անգլիական դեսպանատան Աթարգման Սըր Ալֆրէտ Սանտիսընի ազգական տիկնոջ մը վրայ , և կողոպտեցին , բայց երկուքը քիչ մը վերջը բռնուեցան ։

Վագըթ որ այս լուրը կուտայ , կը ծանուցանէ նաև թէ Սըր Ալֆրէտ Սանտիսընի ազգականներէն ուրիշ տիկին մ՚ հետը Թաթար սպասուհի մը տարած լինելով ի Պըրուսա , սպասուհին երէկ անձնասպանութիւն ըրեր է ինքզինք խեղդելով ։ Անմիջապէս քննութիւն կատարուելով, ապացուցուած է որ սպասուհին մի քանի օրէ ի վեր կորուսած է եղեր այն ամենակարևոր բանը՝ զոր խելք կ՚անուանեն ։

—Վագըթ իւր այս աւուր թըւով ալ կը կրկնէ թէ Լորիս Մէլիքոֆ չարաչար կը հալածէ , կը չարչարէ և ջարդել կուտայ Կովկասի Հայերն , որք կ՚ապշին եղեր տեսնելով որ իրենց հայրենակիցն այսչափ կը նեղէ զիրենք ։ Վագըթ կը յորդորէ Թուրքիոյ Հայերն որ խղճան իրենց Ռուսաբնակ եղբարց վիճակին վրայ , և կը հարցնէ թէ Բ. Դուռն երբէք Հայ պաշտօնատար մը գործածա՞ծ է Հայերն հալածելու համար ։

—Կարինէն գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ Կարնոյ քաղաքին շրջակայքը գողութիւնք և սպանութիւնք շատցած և ճանապարհներն անապահովութեան մէջ լինելով , կառավարութեան ժողովոյն մէջ իրաց այս վիճակին ուշադրութեան առնուեր և որոշուեր է 150ի չափ ոստիկան պատրաստել և պահպանողական միջոցներ ձեռք առնել յապահովութիւն և յանդորրութիւն ժողովրդեան ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Գում—գափուի Միացեալ թաղից երեսփոխանական ընտրութիւններն երէկ աւարտեցան և արդիւնքն եղած է. —Տօքթ. Այվազեան էֆ. , Սահիրեան Պէյլիքճեան էֆ. , Թադէոս Պէկեան էֆ. , Գէորգ Այվազեան էֆ. Ցակոբ Նէմէնիճեան էֆ ։

Կը լսենք թէ միացեալ թաղերու ընտրողք այն ապաւորութեան ներքև գտնուած են միշտ թէ Մինաս Ջերազ և Ցակոբ Գուրգէն էֆէնտիները սահմանադրական տարիքը չունին ։ Նորայր Բիւզանդացի և Բարթող Թէլեան էֆէնտիներն ալ քուէ ստացած են նախորդ կիրակի , բայց ոչ բաւական թըւով, որպէս զի համեմատական ցանկը մտնէին ։

—

Անցեալ շաբթու ծանուցեր էինք թէ Հայ—կաթոլիկ հասարակութեան նոր Պատրիարքի մ՚ընտրութեան համար Բ. Դռնէն Պօյրուլթու ղրկուած է ։ Կը լսենք թէ նախկին Հասունեան կուսակցութեան վարչական մարմինն , որոյ կեդրոնատեղին է Ս. Ցովհան Ոսկեբերան եկեղեցին , պատուիրակներ ղրկեր է հասկնալու համար միւս կուսակցութեան վարչական մարմինէն թէ այդ Պօյրուլթուն ե՞րբ և ո՞ւր պիտի կարդացուի ի լուր ժողովրդեան , և պատասխան առեր է թէ հրապարակաւ չկարդալ որոշուած է ։ Այս պարագայն գանգատանաց նիւթ եղած է թէ՛ Հակահասունեան և թէ՛ Հասունեան կուսակցութեանց մէջ , և դժգոհութեան ևս առաւել այժ տուած է Նոր Պատրիարքի ընտրութեան համար ի գործ դրուած եղանակն , որով եկեղեցական ժողովը , փոխանակ ժողովրդական մեծամասնութիւն ստացած եպիսկոպոսը Պատրիարք անուանելու , իրաւունք կունենայ ամենէն սակաւաթիւ քուէ ստացող եպիսկոպոսն ալ անուանելու ։ Նոյնպէս քուէհամարին հրապարակաւ չկատարուիլը կրնայ զեղծմանց առիթ տալ ։ Ուստի, ուրբաթ օրը Ս. Ցովհան Ոսկեբերան եկեղեցին գումարեալ ժողովէն 400ի չափ անձինք , որոց մէջ երկու կուսակցութիւններն ալ ներկայացուցիչ ունէին , հանրագիր մ՚ստորագրելով , Ա. նախարարին ղրկեցին, որ դատական նախարարութեան յանձնեց պէտք եղած տնօրէնութիւնն ընելու համար ։

—

Կարինէն լուր կուտան թէ տեղւոյն Անգլիական փոխ—հիւպատոս Պ. Էվէրէթ մայիս 27ին պաշտօնական երեկոյթ մը տուեր է Ռուսիոյ նորընտիր հիւպատոս Պ. Ցէնէթի ։ Այն երեկոյթին ներկայ գտնուեր է նաև Կարնոյ Գեր. Առաջնորդն, ըստ հրաւիրանաց Անգլիական փոխ—հիւպատոսին ։

—

Երէկ Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովոյ ԺԸ նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ , ի ներկայութեան 30ի չափ երեսփոխանաց ։ Ատեանը բացուեցաւ ժամ 7ին , առժամեայ նախագահութեամբ Տօքթ. Փէշտիմալճեան էֆէնտիի ։ Ատենադրութեան ընթերցումէն ու վաւերացումէն յետոյ , վարչութեան ատենապետ Մինաս Ջերազ էֆ. խօսք առնլով կեդրոնական ժողովոյ ներկայացուց նորակազմ Տնօրէն ժողովն , և այս առթիւ ատենաբանութիւն մ՚ըրաւ , զոր կը հրատարակեմք ի ստորև ։ Դիւանական թղթակցութեան ընթերցումէն յետոյ , ժողովն զբաղեցաւ վարչութեան մի ընդարձակ տեղեկագրովն ։ Վարչութիւնը կը յայտարարէր թէ իւր բոլոր գործերը, հաշիւներն և թղթակցութիւնները բաց են և բաց պիտի մնան իւրաքանչիւր երեսփոխանի համար , և թէ ինք չպիտի մասնակցի այն ամեն քուէարկութեան որ տեղի ունենայ իւր գործառնութեանց նկատմամբ , որպէս զի իւր 7 քուէից կշռովը չխափանէ ժողովին կամաց ազատ արտայայտութիւնը , քանի որ Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովոյն մէջ 13 քուէ բաւական են որոշում տալու համար ։ Տեղեկագրին այնուհետև կեդրոնական ժողովոյ վաւերացմանը կ՚ենթարկէր վարչութեան որոշումները 14 կարևոր խնդրոյ նկատմամբ ։ Ասոյ վրայ վիճաբանութիւն բացուելով , վարչութեան անդամոց տուած բացատրութեանց վրայ 9 խնդիրք ընդունուեցան միաձայն հաւանութեամբ , և օրը տարաժամած լինելուն համար միւս 5 խնդրոց քննութիւնն յետաձգուեցաւ յաջորդ նստին , որ պիտի գումարի երկու շաբաթէն ։ Ատեանը փակուեցաւ ժամ 11 1/2ին ։

Ահաւասիկ Պ. Մինաս Ջերազի ատենաբանութեան պատճէնը .

Պարոններ ,

Պատիւ ունիմ ներկայացունել ձեզ վեց նորընտիր պաշտօնակիցներս, որովք կազմուեցաւ ձեր վարչական մարմին ։ Որպէս կը տեսնէք , պէտք չ՚ունեցայ առնել ոչ—երեսփոխան աջակիցներ , զի Միացեալ Ընկերութեանց Կեդր. Ժողովն ունի իւր մէջ ամեն հարկաւոր տարր ամեն ճիւղի համար ։ Պ. Ցովհաննէս Արշակունի ստանձնեց ատենադպրութիւնն , Պ. Ռեթէոս Պէրպէրեան ուսումնապետութիւնն , Պ. Գէորգ Թօփալեան գանձապետութիւնն , Պ. Միսաք Մանուկեան հաշուապետութիւնն , Պ. Ցովհաննէս Կիւլպէնկեան ծախսապետութիւնն և Պ. Ցովհաննէս Շնորհքեան հաշուակալութիւնն ։ Վարչութիւնն ըսկսած է գործել , որպէս պիտի յայտնէ այժմ իւր առաջին տեղեկագիր . այլ նա պէտք ունի ձեր համակիր աջակցութեան , զի ձեռնած է 7 անհատներէ , մինչ դուք կը բաղկանաք 65 անձերէ ։ Կը ներէ՞ք մեզ յարել թէ , որպէս զի չը խզուի այդ գործակցութիւն, հարկ է որ հաշտութեան ծիածանն բարձրանայ Կեդր. ժողովին վրայ , որպէս ծագեցաւ Տնօրէն ժողովին մէջ ։ Գաղափարի տարբերութիւնք բնական են ամեն ակումբի համար այլ նշանաբանն չ՚է կրաւորական հնազանդութիւն . կուսակցութիւնք կրնան արդար լինիլ հաւասարապէս , զի ճշմարտութիւնն կրնայ նկատուիլ զանազան տեսակէտներէ , որպէս Արարատ որ ունի տարբեր երեւոյթ հիւսիսէն և տարբեր հարաւէն . սակայն, երբ միտն կը նրբանայ մինչև բծախնդրութիւն , պէտք է որ սիրտն վեհ մնայ միշտ ։ Դուք ունիք այս մեծանձնութիւն, զի կը ներկայացունէք երիտասարդութիւնն, հասակ ուր հոգին բաց է ամեն գեղեցիկ զգացման առջեւ ։ Մեք , որ միացեալ եմք ոչ լոկ անունով , կրկնապատկեմք մեր ճիգեր որպէս զի մեր սուրբ ձեռնարկ վերահանդի բարոյապէս և նիւթապէս ։ Գիտեմ թէ ժամանակն է աննպաստ և թէ կան ամենուրեք թերահաւատներ մեր գործի նկատմամբ . այլ հարկ է որ դա աւելի վառէ մեր անձնուիրութիւն ։ Նոցա , որք կը հաշւեն թէ մեր կրթական նպատակ անօգուտ և մինչև իսկ վնասակար է ազգին , կը պատասխանեմք անխռով . «Կրթութիւնն ոչ նուազ անհրաժեշտ է գործաւորին համար , մշակին համար , արհեստաւորին համար , վաճառականին համար ։» Ինչ է մեր նպատակ . — Նկատառելով տեղական պէտքերն , պատրաստել մի սերունդ որ լինի առողջ , առաքինի և հմուտ ։ Նա , որ ունի կորով , բարոյական և գիտութիւն , կրնայ հասնիլ դիւրակեցութեան ։ Ահա մի յոյսատիր ուսմ կը համակրի մեր ազգ , որպէս մեք կը համակրիմք Արուեստասիրաց Ընկերութեան ։ Նոյն նպատակին համար մեզ հետ կ՚աշխատակցին նաև Խրիմեան և Ասիական Ընկերութեանց մեր ընտիր եղբայրներ և մինչև իսկ Ազգանուէր , Կրթասէր և Պարզասէր Ընկերութեանց մեր ազնիւ քոյրեր ։ Այսքան անձնուիրութիւնք , որք փառքով կը ծաղկեն Կոստանդնուպոլսի Հայերն և Հայուհիներն , չը պիտի մնան անպտուղ ։ Միացեալ Ընկերութիւնք , իբր գլուխ այս շարժման , ունին մեծագոյն պատասխանատուութիւնն ։ Ուրեմն բազմապատկեմք մեր զոհողութիւնք , և մեր խիղճ պիտի լինի զուարթ ։ Ազգասիրութիւնն , որ մի շնորհ կը նկատէր ց՚արդ , մի պարտք է այսուհետև ։ Ուխտեմք այս համոզում , և մեր ակումբ , որ նոր բոլորեց առաջին տարին , պիտի ողջունէ երկա՛ր տարիներ ։

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի կենաց դէմ՝ դաւաճանողներուն դատաստանն յունիս 15 ին սկսաւ Մալթա Քէօշքի մօտ վրանի մը ներքեւ, որ 500 էն աւելի մարդ կրնար պարունակել։ Առաջին նստին հազիւ 150 հոգի ներկայ էին, առանց ի հաշիւ առնլու դատաստանին յատուկ պաշտօնական անձինքը, պահապանները, եւայլն։

Ունկնդրաց մէջ կը տեսնուէին Պարսկական դեսպան Մոհսին խան։ Միւնիֆ փաշա, Ճէվտէթ փաշա, Հասան Ֆէհմի էֆէնտի, և Անգլիական դեսպանատունն ի բաց առեալ, միւս բոլոր դեսպանատանց թարգմանները։ Ներկայ գտնուող Օսմանեան պաշտօնատարաց մէջ կը տեսնուէին վեհ. Սուլթանին անձնական գանձուն վերատեսուչ Գազազեան Յակոբ էֆէնտի, Բէրայի ոստիկանապետ Պահրի փաշա, տէրութեան Գերմանացի երկու պաշտօնատարները Պ. Պ. Վէյթէնսորֆ և Կեօշէր, և վեհ. Սուլթանին թիկնապահ Ֆրանսացի Տրէյսէ գնդապետն, որ բարեկարգութեան կը հսկէր։ Լրագրութեան ներկայացուցիչներն էին տեղւոյս մի քանի լրագրաց խմբագրերն և օտար լրագրաց մի քանի թղթակիցք։

Ժամն 3 1/2 ին, վերաքննիչ ատենին նախագահ Սուրուրի էֆէնտի թիկնաթոռը նստաւ, և ատեանը բացաւ։ Իւր օգնականներն էին՝ Խրիստոֆորիտէս էֆէնտի, նախագահ եղեռնական ծիւղին, և դատաւորք՝ Հիւսէյին պէյ, Էմին պէյ, Թագւոր էֆէնտի և Հաճի Էմին էֆէնտի։ Ընդհանուր դատախազի աթոռին վրայ նստած էր Լաթիֆ պէյ, որ վճռաքննիչ ատենին ընդհանուր դատախազն է, հանդերձ երկու օգնականօք։ Ամբաստանելոց պաշտպաններուն յատկացեալ աթոռոց վրայ կը տեսնուէին հետեւեալ Օսմանցի փաստաբանք, Րէֆիգ էֆէնտի, Շէհրի էֆէնտի, Իզզէթ պէյ, Մէհմէտ Ալի էֆէնտի և Քոսթաքի Սալթինաքի էֆէնտի։

Ամբաստանելոց ամենքը միասին դատաստանին սկիզբը ներս չբերուեցան, այլ այն կարգաւ, որով նոցա իւրաքանչիւրին դէմ ուղղեալ ամբաստանագիրք կարդացուեցան։

Ժամը 9ին քառորդ մնացած Միտհաթ փաշան բերին, յորմէ քիչ առաջ արդէն դատարանը մտած էին Տամատ Մահմուտ և Նուրի փաշայք։

Միւս ամբաստանեալներն են. Մուսթաֆա փէհլիվան, Հաճի Մէհմէտ, Ճէզայիրլի Մուսթաֆա, Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի սենեկապետ Ֆախրի պէյ, Նամիք փաշայի որդի հազարապետ Ալի պէյ, հազարապետ Նեճիպ պէյ, Սայիտ պէյ և Իզզէթ պէյ։

Միտհաթ փաշա, Նուրի փաշա և Ֆախրի պէյ շատ անյողդողդ վարմունք մը ցոյց տուին, հանդարտ և ապահով պատասխաններ կուտային այն բոլոր հարցմանց՝ զորս Նախագահը կ'ուղղէր իրենց։

Տամատ Մահմուտ փաշա, ընդհակառակն, բարոյապէս և ֆիզիքապէս յոյժ ընկճեալ երեւոյթ մ'ունէր. քանիցս տեսնուեցաւ որ բուռն ջանքեր կ'ընէր արտասուքը զսպելու։

Նախագահը նախ ամբաստանելոց անունները, մականունները, եւ., հարցուց. յետոյ քարտուղարներուն հրաման ըրաւ որ կատարուած քննութեան արդիւնքը բովանդակող տեղեկագիրը կարդան։ Ահաւասիկ յիշեալ տեղեկագրին համառօտութիւնը.

Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի սպանման միջոցին, նորա սենեկապետը՝ Ֆախրի պէյ՝ վեհապետին ետեւը կեցած և թեւերը բռնած էր. Ճէզայիրլի Մուսթաֆա և Հաճի Մէհմէտ՝ դժբաղդ զոհին ծունկերուն վրայ նստած էին, և Մուսթաֆա փէհլիվան՝ սպիտակ կոթ ունեցող դմելիի մը միջոցաւ՝ նորա երակները կտրած էր։

Այս ոճրին ամբաստանելոց գործել տուած են Տամատ Մահմուտ և Նուրի փաշայք, որք իբրեւ վարձատրութիւն ամսական 100 ոսկի խոստացած էին, այն 30ական ոսկիէն զատ՝ որք կանխաւ վճարուեցան իբրեւ պարգեւ։ Այս ամսական թոշակին հետքերը գտնուած են նախորդ Սուլթան Մուրատի իշխանութենէն յետոյ արքունի պալատան հաշիւները քննուած ժամանակ։

Այս ոճրին գործադրումն որոշուած էր Սուլթան Մուրատի իշխանութեան առաջին օրերը խորհրդոյ մը մէջ, որ կը բաղկանար Մէհմէտ Րիւշտի, Հիւսէյին Աւնի, Միտհաթ և Տամատ Մահմուտ փաշաներէն և Շէյխ-իւլ-իսլամ Հասան Խայրուլլահ էֆէնտիէն։

Ոճրին գործադրման հսկած են հազարապետ Ալի և Նեճիպ պէյերը։

Քննութեան արդեանց նայելով, այս դաւադրութեան նպատակը միայն Սուլթան Ազիզի սպանումը չէր, այլ որոշուած էր նաև որ բոլոր կայսերազուն իշխանք Պէպէքի բարձանց վրայ առանձին տեղ մը Նիսպէթիյէ կոչուած քէօշքն հրաւիրուին այն պատրուակաւ թէ Սուլթան Մուրատ, որ յայնժամ կ'իշխէր, կոչունք մը կը հրաւիրէր կայսերական գերդաստանին բոլոր անդամները, բայց իրօք անոնց ամենը պիտի սպաննուէին։ Սակայն արդի Սուլթանն, որ յայնժամ գահաժառանգ իշխան էր, դաւադրութենէ մը կասկածելով, չընդունեց այդ հրաւէրն և կայսերական գերդաստանին միւս անդամոց ալ թոյլ չը տուաւ որ երթան։

Այս ամեն իրողութիւնք, կ'ըսէր տեղեկագիրը, քննութեամբ երեւան հանուած և ամբաստանելոց խոստովանութեամբք հաստատուած են։

Քննութեան արդեանց վերաբերեալ այս պաշտօնագրին ընթերցումէն յետոյ, քարտուղարք ընդհանուր դատախազին ամբաստանագիրը կարդացին, յորում, իրողութեանց մանրամասն նկարագրութենէ մը յետոյ, ընդհանուր դատախազը կը պահանջէր որ Մուսթաֆա փէհլիվան, Մուսթաֆա Ճէզայիրլի, Հաճի Մէհմէտ, Ֆախրի, Նեճիպ և Ալի պէյերը մահուան պատժոյ դատապարտուին, և պատժական օրինագրքին 170 և 184րդ յօդուածոց համեմատ պատիժներ որոշուին նախորդ Սուլթան Մուրատի, նորա մօր, ինչպէս նաև Մէհմէտ Րիւշտի, Միտհաթ, Տամատ Մահմուտ և Տամատ Նուրի փաշայից դէմ, իբրեւ գործուած ոճրին թելադիր, և Սայիտ ու Իզզէթ պէյերուն դէմ, իբրեւ մեղսակից։

Ամբաստանագրէն զատ, ընդհանուր դատախազն ուրիշ գրութիւն մը կարդաց որ ամբողջ եղերերգութեան մանրամասն պատմութիւնն էր, Սուլթան Ազիզի գահընկեցութեան յանգող Պետական հարուածին պատրաստութենէն մինչեւ Սուլթան Ազիզի մահը։

Այս գրութիւնն ալ՝ հանդուցեալ վեհապետին՝ իւր անկումէն յետոյ կրած չարչարանքները կը թուէր։

Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ նաւակով մը Թօփգափուի հին պալատը տարուեցաւ յորդ անձրեւի մը միջոցին, որ մինչեւ ոսկրն անցաւ։ Երբոր հին պալատն հասաւ, փոխելու կտաւեղէն չտրուեցաւ իրեն, և հարկադրեցաւ այն թաց հանդերձները մարմնոյն վրայ չորցնելու։ Նօթենալով՝ դրգալ մ'ապուր ուզեց, և չտուին յայտնելով թէ առանց նախարարաց հրամանին չէին կրնար կերակուր տալ իրեն։

Մայր թագուհին ալ նոյնպէս հին պալատը տարուեցաւ անպատիւ վիճակի մէջ, առանց քողի, և ամեն մարդէ տեսնուելու կերպիւ։

Նախագահն այս գրութեանց ընթերցումէն յետոյ ամբաստանելոց հարցաքննութեանն սկսաւ։

Ամենէն առաջ Մուսթաֆա փէհլիվանն հարցաքննեցաւ։

Յայտնեց թէ Մահմուտ և Նուրի փաշաներէն ստացած հրամանին համեմատ՝ նախորդ վեհապետին բազկերակները կտրեց սպիտակակոթ դմելիով մը. մինչդեռ Ճէզայիրլի Մուսթաֆա և Հաճի Մէհմէտ նորա ոտուըները բռնած էին և Ֆախրի ալ թեւերը։ Ամբաստանեալն իւր գործողութեան ձեւն ալ նշանացի ցոյց տուաւ։

ՆԱԽԱԳԱՀԸ. — Նահատակն անմիջապէս մեռա՞ւ։ կ'ըսեն թէ պալատէն դուրս տարուած ժամանակ շունչը դեռ վրան էր։

Մուսթաֆա փէհլիվան. — Ոչ, կատարելապէս մեռած էր։

Ամբաստանեալն յայտնեց նաեւ թէ Սուլթանին մեռնելէն յետոյ տասն փարանոց պղինձ դրամ մը դրաւ կտրուած բազկերակներէն միոյն վրայ և յետոյ կապեց՝ կարծեցնելու համար թէ Սուլթանն անձնասպան եղած և իրեն օգնութիւն տրուած էր։

Նախագահն անցաւ Հաճի Մէհմէտի հարցաքննելու, որոյ համար ամբաստանութիւն կար թէ Սուլթանին երակները բացուած միջոցին՝ նորա ծունկերուն վրայ նստած է եղեր։

Հաճի Մէհմէտ կատարելապէս հաստատեց նախորդ ամբաստանելոյն խոստովանութիւններն և աւելի կատարեալ մանրամասնութիւններ տուաւ։

Ճէզայիրլի Մուսթաֆա ալ հարցաքննուելով, առաջին հարցաքննութեան ժամանակ ըրած բոլոր խոստովանութիւններն յետս կոչեց, յայտնելով թէ ինք այն դժբաղդութիւնը պատահած ժամանակ հանգուցեալ Սուլթանին սենեկին մէջ չէր, և թէ ինք զայս միայն կրնայ հաստատել թէ Սուլթանն ինքզինք սպաննեց։

Յետոյ Ֆախրի պէյի հարցաքննութիւնը կատարեցաւ։

Ֆախրի պէյ, սենեկապետ Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի, երկարօրէն պատմել սկսաւ այն ամեն անցքերն որք Սուլթանին գահընկեցութենէն մինչեւ Ֆէրիէի պալատը փոխադրուելուն անցած էին։ Նորա կրած զրկանքները պատմեց, բայց բացարձակապէս ուրացաւ սպանութեան ոճրին և պնդեց թէ հանգուցեալ Սուլթանն ինքզինք սպաննեց՝ բազկերակները բանալով։

Ապա հազարապետ Նեճիպ և Ալի պէյերն հարցաքննուելով, նոքա ալ ուրացան ոճրագործութիւնը։

Նախագահը Մահմուտ Ճէլալէտտին փաշայի և Նուրի փաշայի հարցաքննութեանն անցաւ, որք բացարձակապէս մերժեցին իրենց դէմ բերուած ամբաստանութիւններն, և ոճրոյն կատարման մասին նախընթաց ամբաստանելոց ըրած յայտարարութիւններն հերքեցին։

ՆԱԽԱԳԱՀՆ հարցուց Մահմուտ փաշայի թէ Սուլթան Ազիզի գահընկեցութենէն յետոյ մասնախորհուրդ մը չկազմուեցա՞ւ, և այն մասնախորհուրդն ի՞նչ տեսակ գործերով կ'զբաղէր։

Մահմուտ փաշա պատասխանեց թէ ինք գահընկեցութեան գործէն բնաւ ծանօթութիւն չունէր, և թէ հետեւեալ օրը միայն իմացաւ եղելութիւնը։ Իսկ նախագահին ըսած մասնախորհրդին ինչո՛վ զբաղիլը չէր գիտեր։

ՆԱԽԱԳԱՀԸ դիտել տուաւ ամբաստանելոյն թէ Նուրի փաշա և Խաֆէզ էֆէնտի կը պնդէին թէ ինք ալ անդամ էր այն մասնախորհրդին։

Մահմուտ փաշա պատասխանեց թէ սուտ է։

ՆԱԽԱԳԱՀՆ հարցուց թէ Սուլթան Ազիզի անկումէն յետոյ որո՞ւ յանձնուած էր պալատին տնօրէնութիւնը։

Մահմուտ փաշա պատասխանեց թէ չգիտեր, և թէ՝ առաջ ով որ էր, հաւանականաբար դարձեալ նմա յանձնուած էր։ Ինքը Մուրատ էֆէնտիի գահակալութիւնն հետեւեալ առաւօտ իմացաւ ծառայէ մը։

ՆԱԽԱԳԱՀՆ հարցնելով ամբաստանելոյն թէ Ֆէրիէի պալատին տնօրէնութիւնն իրեն յանձնուա՞ծ էր թէ ոչ։

Մահմուտ փաշա այն ժամանակ խել մը մանրամասնութեանց մէջ մտաւ, որք բնաւ յարաբերութիւն չունէին իրեն եղած հարցման հետ։

Խնդրոյն վերադառնալու կոչուելով՝ ըսաւ թէ ոճրին կատարուած գիշերն ինք Մէհմէտ Րիւշտի փաշային գնացած էր, և թէ չէր ճանաչեր ոճրին հեղինակները։

ՆԱԽԱԳԱՀՆ այն ժամանակ դիտել տուաւ թէ Նուրի փաշային և Սայիտ պէյին վկայութեանց նայելով, ինք կը ճանչէր ոճրագործները և թէ ինք հրամայած էր նոցա գործել ոճրն։

Ամբաստանեալը մերժեց նաեւ այս ամբաստանութիւնը։

Հարցուելով իրեն թէ ոճրին կատարուած գիշերն ինք Ֆընտգլը իւր բնակարանը չէ՞ր գտնուեր, ինչպէս որ իւր ծառաներէն մին կը վկայէ, Մահմուտ փաշա դարձեալ ժխտեց։

Հարցուելով իրեն թէ ոճրին կատարուելէն կէս ժամ առաջ ինք Ֆէրիէի պալատը չէ՞ր գտնուած, ուր ներքինւոյ մը հետ խօսակցեր էր, և ուր ոճրին կատարուելէն 5 վայրկեան առաջ նոյն պալատան երրորդ յարկը հարճի մը հետ խօսակցեր, և հոն փոխադրուած սնտուկ մը կոտրեր էր, իրողութիւնք, զորս Ռաքէմ աղա անուն ներքինին կը պատմէ, ամբաստանեալը ժխտեց և ըսաւ թէ այս ամեն իրողութիւնք սուտ են։

Խրիստոֆորիտէս էֆէնտի այնուհետեւ Նուրի փաշային հարցաքննութեանն անցաւ։ Հարցուց նըմա թէ հրահանգ չէ՞ր տուած Մուսթաֆա Բէհլիվանին և Պէքճի Մէհմէտին, զորս ինք ղրկած է Ֆէրիէի պալատը։

Նուրի փաշա պատասխանեց թէ ինք չէր կրնար հրամաններ տալ ուրու և իցէ՝ առանց արտասովոր մասնախորհրդին հրամանին, և թէ՝ ինք այդ մարդիկը Ֆէրիէի պալատը ղրկած ժամանակ՝ իւր հրամաններն ամենուն առջեւ տուած էր։ Կը խոստովանի թէ արդարեւ ոճրին տեղը գնաց, բայց անդ իւր միակ ջանքն եղաւ բժիշկներ բերել տալ։

Ժամ ութը 45 րոպէ անցած՝ Միտհաթ փաշա բերուեցաւ ատեանին առջեւ։ Ներս մտած ժամանակ ամեն մարդ զգածուեցաւ։ Ամառուան մոխրագոյն զգեստ հագած էր և քաջառողջ կ'երեւէր։

Միտհաթ փաշա աթոռի մը վրայ նստաւ։ Նախագահը դիտել տուաւ իրեն թէ պէտք էր ոտքի վրայ կենար՝ եթէ հիւանդ չէր։

Միտհաթ փաշա յայտնեց թէ քաջառողջ էր և ոտքի վրայ ելաւ։

Նախագահն հրամայեց որ ամբաստանագրին Միտհաթ փաշայի վերաբերեալ մասը կարդացուի։

Միտհաթ փաշա՝ ունկնդրաց դառնալով, գոչեց. «Լսեցէ՛ք չափազանցութիւններն». յետոյ սկսաւ ազդուապէս հերքել իւր դէմ յառաջ բերուած ամբաստանութիւններն, և գոչեց թէ զինքն ի մահ դատապարտել ուզելուն համար շնորհակալ է ատեանէն, և ինքզինք երջանիկ կը համարի որ գոնէ խօսելու ազատութիւնն ունի։

Նախագահը դիտել տուաւ նըմա թէ նախ պարտի ամբաստանագրին ընթերցումը լսել, յետոյ ատեանին կողմէ իրեն եղած հարցմանց պատասխանել, և ապա կըրնայ ինքզինք պաշտպանել։

Միտհաթ փաշա՝ նորէն ունկնդրաց դառնալով, դառնապէս հեգնական խօսքերով գանգատեցաւ որ զինքը պաշտպանելու պաշտօն ունեցող փաստաբանին հետ հաղորդակցութիւն չէր կըցած ունենալ, և թէ այդ փաստաբանն իւր ընտրածը չէր, այլ ի պաշտօնէ կարգեալ էր։

Բազմաթիւ ընդմիջումներէ յետոյ վերջապէս աւարտեցաւ ամբաստանագրին ընթերցումը։

Այն ժամանակ Նախագահն հարցաքննել սկսաւ զՄիտհաթ փաշա.

Խրիստոֆորիտէս էֆէնտի հարցուց նըմա թէ Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի գահընկեցութեան գործակից եղա՞ծ էր։

Միտհաթ փաշա պատասխանեց թէ աւելորդ էր այդպիսի հարցում մ'ուղղել իրեն. իւր գործակցութիւնն հանրածանօթ էր։ Մասնախորհուրդ մը գտնուելէն ծանօթութիւն ունենալը ժխտեց, ըսաւ թէ իւր ճանչած միակ խորհուրդը նախարարաց խորհուրդն էր, որուն անդամ էր ինք, և այն խորհրդին մէջ երբեք հրաման տրուած չէր Սուլթան Ապտ-իւլ-Ազիզն սպաննելու։

Միտհաթ փաշա յայտնեց թէ ինք նախորդ Սուլթանին մահը Բ. Դուռն իմացած էր՝ Մեծ-Եպարքոսութեան Միւսթէշար Սայիտ պէյէն։

Խրիստոֆորիտէս էֆէնտի ըսաւ ամբաստանելոյն թէ Սայիտ պէյ կը ժխտէր իւր այս բանը։

Միտհաթ փաշա պատասխանեց թէ այն պաշտօնատարը չէր կրնար ճշմարիտն ըսել, վասն զի այն ժամանակ նա ալ դատաստանի կ'ենթարկուէր։

Խրիստոֆորիտէս էֆէնտի հարցուց Միտհաթ փաշայի թէ ինչո՞ւ համար նախարարութիւնը քննութիւն չհրամայեց։

Միտհաթ փաշա պատասխանեց. «Եթէ ադկից պատասխանատուութիւն կը ծագի, այն ժամանակ բոլոր նախարարութիւնը պէտք է դատաստանի ենթարկի։»

Խրիստոֆորիտէս էֆէնտի՝ Միտհաթ փաշայի և Մէհմէտ Րիւշտի փաշայի ըրած յայտարարութեանց իրարու հակառակ լինիլը ցոյց տալ ուզելով, Միտհաթ փաշա ըսաւ. «Եթէ Մէհմէտ Րիւշտիի ամեն ըսածը լսուի, ուրիշ շատ բաներ ալ կը գտնուին։»

Իզմիրի միջադէպին գալով, Միտհաթ փաշա յայտնեց թէ կը ցաւի որ ինքզինք օտարի պաշտպանութեան ներքեւ դնելու հարկադրեցաւ. բայց այնպէս ընելուն պատճառն իւր շուրջը գտնուողներուն վրայ վստահութիւն չունենալն էր, վասն զի երկար ժամանակէ 'ի վեր զինքը կը լրտեսէին։

Ատեանը քառորդ մը դադար տալէ յետոյ, 20 ի չափ անձանց վկայութիւնները լսելու հրաման ըրաւ։

Նախ մայրաքաղաքէս դուրս պաշտօն վարող վկայից գրաւոր վկայութիւնները կարդացուեցան, յետոյ մայրաքաղաքս գտնուող վկայից յայտարարութիւնները լըսուեցան, որոց մէջ՝ Ջէֆքիրայ անուամբ Չէրքէզ աղջիկ մը կար, որ հանգուցեալ Սուլթան Ազիզի կանանոցին աղջիկներէն էր։

Այս աղջիկը կը յայտնէ թէ Սուլթանին մահուան գիշերը լուսածին պէս, ամենէն առաջ ինք մտաւ նորա սենեակն, և Սուլթանին գլուխը բռնելով՝ ձեռուըները քննեց, և տեսաւ որ բնաւ արեան հետք չկար նոցա վրայ, և համոզուեցաւ որ Սուլթանն ինք չէր կտրած իւր բազկերակները։

Չէրքէզուհին տեսարանին պատմութիւնն ըրաւ, որ բոլորովին համաձայն գտնուեցաւ իւր գրաւոր վկայութեան։

Յետոյ եկան հանգուցեալ Սուլթանին քով ծառայող երկու ներքինիք, որ յայտնեցին թէ իրենք ականատես եղան Սուլթանին սպանման։ Նոցա վկայութիւններն համաձայն են Մուսթաֆա փէհլիվանին ըրած յայտարարութեանց։

Այս երեք վկայից ունկնդրութենէն յետոյ՝ ծրարի մը կնիքը խզուեցաւ, որոյ մէջ պահուած էին մկրատներն և Սուլթան Ազիզի անձնական բժիշկ Մարքոյ փաշայի պահպանութեան յանձնուած։

Այս մկրատներն, որք ունկնդրաց առջեւ քննուեցան, յոյժ փոքր էին։ Ամբաստանութիւնը կը պնդէ թէ չէին կրնար հանգուցեալ Սուլթանին մորուքն յարդարելու ծառայել, ինչպէս բռնեցաւ այն ժամանակ, ոչ ալ կրնային անձնասպանութիւն ընելու գործածուած լինիլ։

Այս ապացուցական նիւթին քննութենէն յետոյ մեծ ծրար մը բերուեցաւ, որոյ մէջ դրուած էին հանգուցեալ վեհապետին արիւնաթաթաւ կտաւիքն ու հանդերձները. բայց ժամանակը շատ ուշ լինելուն՝ ատեանը գոցուեցաւ ժամը 11ին։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Վերջին թղթաբերով եկած Եւրոպական լրագիրք կը շարունակեն մանրամասն տեղեկութիւններ տալ այն թշնամական ցոյցերու վրայ զորս Ֆրանսացիք և Իտալացիք կ'ընեն ։ Ֆրանսայի զանազան քաղաքաց մէջ Իտալացիք չարաչար գանակոծ և ոմանք մահու աստիճան վիրաւորուած են . Իտալացիներ ալ դանակներով վիրաւորած և սպաննած են մի քանի Ֆրանսացիներ ։ Սոքա հասարակ գործաւորներ էին, բայց յանուն հայրենասիրութեան կը կատարէին այս անկարգութիւնները ։

Քաղաքական յօդուածի մը մէջ գիտել կուտայինք անցեալները թէ Պիսմարք իշխանը ձրիաբար չէ օժանդակած Ֆրանսայի Թունուզական աշխարհակալութեան ։ Հիմա, խորամանկ քաղաքագէտին հաշիւն իրականութիւն գտնելէ, այսինքն Ֆրանսացւոց և Իտալացւոց միջև թշնամութիւն լինալէ յետոյ, Գերմանական մամուլը քողը վեր կ'առնու, և ի մէջ այլոց՝ Քէօլնիշէ Ցայթունկ կը յայտարարէ . «Եթէ Ֆրանսայի և Գերմանիոյ միջև նորէն պատերազմ ծագի, այս անգամ մեք Ալպեան լեռներուն միւս կողմն ապահով դաշնակից մը պիտի ունենամք . » (Իտալիոյ ակնարկելով ։)

* * *

Բեդրապուրկի մէջ Չօռնէ փէրէտէլ անուամբ Ռուսական նոր լրագիր մը հրատարակուեցաւ, որոյ տպագրիչն ու տպարանն, ըստ սովորութեան, անծանօթ են ։ Այս թերթ Յեղափոխականաց այն մասին գործիքն է որ արքայասպանութեան գաղափարը կը մերժէ ։ Բայց երկու մասերն ալ համաձայնութեամբ կը յայտարարեն թէ Ռուսիոյ մէջ իրաց ներկայ վիճակն անհանդուրժելի է, և պէ՛տք է փոխուի ։ Թէ ծայրայեղ Ռուսականք ըստ առաջնոյն գործունեայ վիճակի մէջ են, այսմ ապացոյց կրնայ համարուիլ մօտերս դարձեալ կարգ մը պայթուցիկ ռմբոց և ականներու երեւան հանուիլն ։ Ոստիկանութիւնը միշտ կ'զբաղի այս տեսակ թանկագին գիւտեր ընելու ։ Ռուսականք մօտերս չքեղապէս տպագրեալ Յայտարարութիւն մը հասուցին Աղեքսանդր Գ. կայսեր ձեռքն, յորում կ'ըսեն թէ առ այժմ հարկ չեն տեսներ կրկնելու իրենց եղեռնական ձեռնարկներն, ըստ որում նոր նախարարութեան բռնած ընթացքն արդարապէս յեղափոխութեան գիրկը կը տանի զերկիրն ։

* * *

Պէ՛տք է ջնջել թէ ոչ Մահու պատիժն, այսինքն այն օրէնքն որ մահուամբ կը պատժէ մարդասպաններն և նոցա մեղսակիցները ։ Չը գիտեմք թէ [illegible] մարդասէր հեղինակն ինչ կը խորհի այժմ այդ նկատմամբ, բայց կը թուի թէ Անգլիոյ արդի ազատական խորհրդարանին մեծամասնութիւնը մահու պատիժը ջնջելու կողմն չէ ։ Երեսփոխան Պ. Փիզ, որ այդ պատժոյն ջնջումը կը փաստաբանէ միշտ մեծ եռանդեամբ, յունիս 22 ին առաջարկ մը ներկայացուց, և Ակադեմական վիճաբանութենէ մը յետոյ, 79 ի դէմ 175 երեսփոխանք յայտնեցին իրենց քուէով թէ մահու պատժոյն պահպանութիւնը կուզեն ։ Ներքին գործոց արդի նախարար Սըր Հարքորթ և նախորդ նախարար Սըր Քրոս հակառակեցան Պ. Փիզի առաջարկին, գլխաւորապէս գործնական փաստեր մէջ բերելով, որոց բովանդակութիւնն ուրիշ առթիւ պիտի ներկայացնեմք ։

* * *

Թայմզ կը ծանուցանէ . "Պուլղարիոյ մէջ գործոց վիճակը տագնապալից երևոյթ կ'առնու ։ Սոֆիայի մէջ գինեալ մարդիկ յարձակում մ'ըրին երեք երեսփոխանոց և ուրիշ երկու անձանց վրայ, և կը կարծուի թէ սոքա մահացու կերպիւ վիրաւորուած են ։ Պ. Զանքոֆ թող տրուած է ։„ — Հաւաս ծանուցած էր թէ Սոֆիայի մէջ երկու ազատական երեսփոխանք ըսպաննուած են . Փիլիպէի Մարիցա լրագիրը սուտ կը հանէ այս լուրն, և կ'ամբաստանէ Հաւասի թղթակիցն իբրև հնարիչ երկիւղալի լրոյ ։

* * *

Արևելեան Ռումելիի մէջ վերջին օրերս բազմաթիւ Միթինկներ գումարուած էին համակրութիւն յայտնելու համար Պուլղարիոյ Ազատականաց դատին, և արտայայտելու համար Արևելեան Ռումելիի Պուլղար ընակչաց այն զօրաւոր փափաքը թէ երկու երկիրները մէկ կառավարութեան ներքև միանան ։ — Փիլիպէէն կը ծանուցուի Անգլիական լրագրաց թէ Բ. Դուռն այս Միթինկներուն վրայ բացատրութիւն պահանջեր է, և Փիլիպէի կառավարութիւնը պատասխաներ է թէ նահանգին կազմական կանոնագրին հակառակ բան մը տեղի ունեցած չէ ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի ՓՈՔՐ ՀԱՅՈՑ

Պարբերական տեղեկութիւնք . — Քաղաքիս անապահով վիճակն . — Ընթացք Ազգային գործոց ։

Սեբաստիա, 11 յունիս 1881

Որպէս յայտնի է Մասիսի ազնիւ ընթերցողաց, ժամանակէ մ'ի վեր Սեբաստիոյ ժողովրդեան կենաց և ընչից ապահովութիւնը վրդովեալ է . և ահա այս ալ բաւական չը լինելով՝ սոյն անտանելի կացութիւնը ծանր երևոյթ մը առնուլ կ'սկսի վերջին ատեններս . ոճրագործք և աւազակք տեղական իշխանութեանց թոյլ ու անտարբեր ընթացքէն օգուտ քաղելով կը համարձակին իւրեանց նողկալի արհեստն առաջ տանիլ զանազան անգութ ոճրագործութեամբք և աւարառութեամբք ։

29 մայիս, քաղաքէս վեց ժամ հեռի դէպ հարաւ-արևմուտս գտնուող Ուլաշ հայաբնակ գիւղին մէջ . ցորեկ ատեն, Գարա Մանուկեան Կարապետ և Մանուկ իւրեանց արտը հերկելոյ ժամանակ, երեք Չէրքէզք վերայ կը հասնին և նոցա վեց եզները կը պահանջեն . սակայն առաջինն ընդդիմանալով Կարապետ ատրճանակի հարուածով մի կը սպաննուի և Մանուկ ալ ծանրապէս կը վիրաւորի . որով աւազակք դիւրութեամբ իւրեանց զոհոն կը տանին . եղելութիւնը կառավարութեան իմաց կը տրուի, սակայն չ'եմք գիտեր ինչ պատճառաւ, ընդհանուր դատախազն կամ նորա օգնականը չեն հաճած քննութեան երթալ, և բաւականացած են մի պարզ գրագրի յանձնել գործը ։ Ոճրագործներէն մին, որ իւր չարագործութիւններով համբաւաւոր է, ձերբակալուած է գիւղացւոց ձեռամբ, իսկ միւսները դեռ ձեռք անցած չ'են . և չեն փնտռուիր անգամ ։

Անցեալ շաբթու զինուորք կրթութեան երթալու համար խմբովին շուկայներէն անցած ժամանակ Հայ և Թուրք խանութպաններն հրացաններով կը դանակոծեն զիրենք բարևելոյ հեգնելոյ համար . բոլոր դանակոծեալք բողոք կը բառնան զինուորական հրամանատարին, և նա «սիզ ատէ պիրագ իթամթաա տուրուն . . . » ասելով կը ճամբէ զանոնք ։

Դարձեալ անցեալ շաբթու քաղաքէս 2 ժամ հեռի դէպ հիւսիս գտնուած Մայրագոմ կոչուած տեղն Եւդոկիայի երկու Հայ և մի Թուրք կողոպտուեցան ։

Ս. Սարգսի գողերը ցարդ դատաստանի ենթարկուած չեն և չեմք գիտեր թէ խնդիրն ո՛ւր պիտի յանգի ։ Նոքա որք կը ջանան քաղաքիս վիճակը վարդագոյն նկարել, արդեօք ասոնց ինչ պիտի ասեն ։

Տեղւոյս ազգային վիճակը, ցաւ է ասել, որ գոհացուցիչ երևոյթ մի ունենալէ խիստ հեռի է ։ Կրթական խնդիրը խել մի օգտակար խնդրոց հետ բարձի թողի է եղած . ապագայ սերնդեան դաստիարակութիւնը նշանակութիւն չունենալ կը թուի մեր Պատուարժան երեսփոխանաց մօտ, որք սովոր են կարծել թէ իւրեանց պարտականութիւնն կատարած կը լինին կիւրակէ առաւօտներն եկեղեցւոյ աւարտմանէ վերջ խորհրդարանին մէջ խմբովին ձրիաբար սուրճ խմելով ։ Ազգային ժողովականք ընդհանրապէս ամուլ և ապարդիւն են իւրեանց պաշտօնավարութեան շրջանակին մէջ . քանզի չի գիտեն ազգային կեանքն իմաստաւորել . քանզի միայն իւրեանց անձնական տեսութեանց և գաղափարոց մէջ են սահմանափակուած ։ Ի մեծ զարմացումն, Սեբաստիա մինչ ցարդ տնտեսական մարմնոյ մի գոյութիւնը տեսնելոյ բաղդն ունեցած չէ ։ Ազգային երեսփոխանց ինչ լինիլն մարդ չը գիտեր . և ամեն հաշիւ թանձր վարագուրի մի ներքև թաղուն մնացած է, բազում ժամանակէ աստի, Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր ո՛չ մի ժողով իւր համարատուութիւն չ'է ներկայած, հակառակ ժողովրդեան այնչափ թախանձանաց . Արդէն քանիցս, ժողովոյ համարատուութեան և Տնտեսական ժողովոյ մի կազմութեան անհրաժեշտ լինելոյն համար դիտողութիւնք ուղղուած են Գաւառական երեսփոխանութեան ժողովոյն և Առաջնորդ Ս. Հօր . սակայն անլսելի մնացած են ։ Չը գիտեմք թէ այս անտեղութիւնք մինչև ե՛րբ պիտի տևեն ։

Նամակս աւելի երկարել զգուշանալով կը բաւականանամ այս անգամ այս նիւթի վրայ այսչափ միայն գրել ։

* * *

ՈՒՍՈՒՄՆ ՅՈՒՆԱՐԷՆԻ

ԱՌ Տ. ԲԻՒԶԱՆԴ

Զմիւռնիոյ ազգային դպրոցաց մէջ՝ Յունարէն լեզուի ուսուցման մասին տեղեկութիւն կը խնդրէք ի մէնջ Ձեր Կրթական յօդուածին մէջ . յօժարութեամբ կը փութամք հաճիլ և որոշ տեղեկութիւն մի տալ Ձեզ այդ մասին ։ Տեղւոյս Ուսումնական խորհուրդն իւր միջավայրի հանգամանքներն ի նկատի առնելով և մանաւանդ նորա պիտոյից համար խիստ կարևոր լինելուն, արժան դատած է՝ Անգլիարէն լեզուի ուսման հետ Յունարէն լեզուն ևս աւանդել Ուսումնարանի բարձրագոյն (Բ. և Գ.) կարգերուն ։ Ինչպէս պիտի տեսնէք դպրոցական կանոնագրէն, ուսմանց ծրագրին մէջ յիշուած է միայն Անգլիարէնն՝ իբրև մի լեզու մասամբ իւիք պարտաւորիչ . իսկ Յունարէնն՝ յիշուած չէ ուսմանց ծրագրին մէջ, որովհետև այդ լեզուն կ'աւանդուի այն ժամանակ միայն՝ երբ Ուսումնարանի բարձրագոյն Բ. և Գ. կարգերու աշակերտաց մէջ գտնուին առ նուազն 8-10 հոգի՝ փափաքող Յունարէն սովրելու . իսկ եթէ փափաքողք խիստ քիչ լինին և կամ բնաւ չ'գտնուին, այն ժամանակ Յունարէնի դասախօսութիւնն ևս կը դադրի, ինչպէս որ անցեալ երկու տարիներուն մէջ՝ առ ի չգոյէ փափաքողաց՝ բոլորովին դադրած էր ։ Ներկայ շրջանիս մէջ կը դասախօսէ Պ. Բ. Սօֆիանօ'փուլոս՝ ընթերցանութիւն և գիր ։

Ի դէպ է յիշել այս տեղ որ Ուսումն. խորհուրդն Յունարէն լեզուի ուսումն ներմուծած է վարժարանաց մէջ մի միայն գործնական կամ առևտրական տեսակէտով և այն ալ մի միայն տեղական հանգամանքներէն ստիպեալ . թէ և սա՛ կէտն ևս պէտք է նկատել թէ՝ որչափ որ Յունաց ազգին մեծամասնութեան պատճառաւ յունական լեզուն մասամբ մի տիրող լեզու դարձած է աստ, բայց և այնպէս գրեթէ բոլոր առևտրական թղթակցութիւնք և վաճառականական յարաբերութիւնք ընդհանուր տիրող լեզուով՝ այն է ֆրանսերէնով կը լինին . իսկ բանասիրական տեսակէտով՝ Յունարէն լեզուի ուսումը բոլորովին մթնոլորտային գաղափար մ'է (1) . . . Գալով խօսակցութեան, այս տեղ Հայ նորածին մանկան բերանը [illegible] Յունարէն լեզուի մէջ կը բացուի . Հայ երիտասարդը [illegible] Հայերէնէ աւելի Յունարէն խօսիլ գիտէ . Հայ ընտանիքը՝ իւր բոլոր անդամներով՝ մի-միայն Յոյն սպասուհւոյ մի պատճառաւ՝ [illegible] Յունարէն կը խօսակցի, որպէս գեղեցիկ դիտել կուտայ Տէր Յ. Գուրգէն՝ իւր «ուղևորութեան» մէջ . . . ։

. . . Բիւզանդ, եթէ կը հաճիք, . . . գրեցէք (°.°) մի կրթական յօդուած՝ «Հայն և Հայ լեզուն» վերնագրով, և ինչ որ կը ներշնչէ այդ նիւթն Ձեր . . . մաս՝ այդ ամենը պարզեցէք Հայուն առջև . . . ։

Գիտէ՞ք, . . . Ռուսիոյ ոչնչականաց կամ ուսանողաց զայրոյթի ամենազօրաւոր պատճառներէն մին ալ ո՛րն է . սոքա տարիներով բժշկութիւն կ'ուսանին և վկայագիր առնալու համար մի քանի տարի ևս Յունարէն լեզուն ուսանելու կ'ստիպուին համալսարանի մէջ . այս պատճառաւ շարունակ կը բողոքեն կրթութեան նախարարին և ապա ոչնչականութեան հուրն առաւել ևս կ'արծարծեն . . . Ռուսիոյ համալսարան և Հայոց վարժարան, ի՞նչ անհո՛ւն խոր . . . ։ (2)

ԶԳՕՆԴԱՍ

1881 Յունիս 13 Զմիւռնի

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆՑ

ԱՐԺԷՔԸ

Կէօմիւշճեան Տ. Մովսէս Ծ. Վարդապետ հետևեալ հրաժարականը կը հաղորդէ մեզ .

Ամեն. Ս. Հայր Նախագահ Ազգ. Կեդր. Վարչ. Խորհրդոյ ։

Պատկառելի Վարչական խորհրդոյդ 1 յունիս ամսաթիւ և 184 թուահամար պաշտօնագիրն ստացայ, որով կը ծանուցանէիք, թէ Ատանայի Առաջն. Տեղապահ Գեր. Տ. Միքայել եպիսկոպոս Ոսկերիչեան հրաժեշտ տուած ըլլալով, փոխանակ նորա զիս ի նոյն պաշտօն կարգած է Ազգ. Պատրիարքարանն։

Արդէն փորձիւ գիտէ Պատկ. Վարչութիւնդ, որ ցարդ գաւառական ո՛և է պաշտօնէ ոչ միայն փախուստ տուած չեմ, այլ յօժարափոյթ ընդունելութեամբ հանդերձ՝ նիւթապէս և բարոյապէս կրածս բազմազիմի վնասուց մասին ևս տրտունջ բրած չ'եմ ։ Սակայն Շապին Գարահիսարի Տեղապահական պաշտօնէն հրաժեշտ տալէս զկնի որոշած եմ ինքնին յայսմ հետէ տեղապահական պաշտամամբ ոչ մի վիճակ չերթալ, քանի որ այդ պաշտաման լոկ անուանական լինելն փորձով տեսայ, և համոզուեցայ կատարելապէս, որ այդ պաշտաման վստահելով ճամբայ ելնող պաշտօնեայն՝ եթէ գործունեայ է՝ ինքն, իսկ եթէ ապիկար է՝ ժողովուրդն կը զրկուի ։

Հա՛յր Սրբազան, գաւառի մը Հայ ժողովրդեան զարգացման առաջին և գրեթէ միակ շարժառիթն՝ իւր Առաջնորդն է, որոյ ընտրութեան իրաւունքը ժողովրդեան տրուած է ըստ սահմանադրութեան . սակայն ըստ որում սոյն իրաւունքն անմիջական և պարտաւորիչ կերպիւ գործադրել տալու կտրուկ միջոցներ ձեռք առնուած չ'են ցայսօր, շատ վիճակներ ուրեմն աւասիկ առանց առաջնորդի մնացած են և կը մնան ։

Դիտելով զայս խոնարհաբար, և Առաջնորդական տեղապահութեան բազմակողմանի վնասներն ալ առաջի աչաց ունելով՝ առաջի առնեմ Ամեն. Սրբազնութեան Ձերում, որ պատրաստ եմ յայն գաւառ և եթ գնալ, որոյ ըստ օրինի Առաջնորդ ընտրուիմ ։

Մնամ խոնարհ ակնածութեամբ

ՄՈՎՍԷՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

Քարոզիչ Գուզկունճուքի եկեղ.

1881 յունիս 18

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՇԱՔԱՐ

Շաքարը, որ զարդիս կերակրոց և առևտրոյ կարևորագոյն նիւթոց մին է, անծանօթ էր հին Հրէից, Յունաց և Հռոմայեցւոց ։ Փոխանակ շաքարի կը գործածուէր այն ատեն մեղր, որ Սուրբ գրոց և Յոյն և Լատին հեղինակաց մէջ քաղցրութեան օրինակ է ։ Յոյն հեղինակ մը շաքարը կ'անուանէ «եղեգի մէջ գտնուած մեղր .» և, երբ եօթն հարիւր տարի Քրիստոսէ ետքը, ուրիշ հեղինակ մը շաքարը կը կոչէ «Հնդիկ աղ, գունով և պնդութեամբ նման հասարակ աղի, բայց ըստ համոյն՝ մեղր» ։ Շաքարի եղէգը որ բուն արևելեան բերք է և կը բուսնէր Չինաստան եւ Հնդկաստան՝ առաջին անգամ բերին Եւրոպա Սարակինոսք Թ. դարուն, և մշակեցին զայն ի Կիպրոս և ի Սիկիլիա ։ ԺԵ. դարուն մտաւ Մատէրա և Գանարեան կղզիները, ուստի յետ սակաւուց տարուեցաւ Բրազիլիա և Արևմտեան Հնդկաստան ։ Շաքարը ծանօթ չէր յԱնգլիա մինչև ԺԴ. դար, և 1329 ին վաճառեցաւ ի Սկովտիա քաշը 240 դահեկանի ։ Ընդհանուր չէր գործածուեր մինչև ԺԷ. դար, կամ մինչև իբր 300 տարի առաջ ։ Այնուհետև սկսաւ տարածուիլ արագ, և գործածութիւնը կ'աւելնայ գամ քան զգամ ։ Մարդոց և ազգաց կերակուրը և ըմպելին շատ կը տարբերին իրարմէ ։ Ցորեն, որիզ, միս և գետնախնձորն անգամ նոյն ընդունելութիւնը չունին ամէն տեղ ։ Բայց ի շաքարէ չկայ այլ նիւթ որ իբրև ուտելի ընդունելի է տղայոց և ծերոց, քաղաքակիրթ մարդոց և վայրենեաց միանգամայն ։

Զարդիս աւելի քան 2,200 միլիոն քաշ շաքար կը հանուի եղէգէ, և իբր 730 միլիոն քաշ ճակնդեղէ ։ Բուսական շաքար կը հանուի նաև արմաւի և Մէյփլ կոչուած ծառոյ մը հիւթէ ։ Մեծին Բրիտանիոյ և Միացեալ Նահանգաց մէջ իւրաքանչիւր բնակիչ միջին հաշուով կը սպառէ տարին իբր 17 քաշ ։ Մեծին Բրիտանիոյ մէջ 1845 ին իւրաքանչիւր բնակիչ միջին հաշուով կը սպառէր իբր 7 քաշ շաքար տարին . 1865 ին այս չափն աւելցաւ մինչև 14 քաշ, վերջապէս 1869 ին հասաւ 17 քաշ ։

Շաքարը կը բաղկանայ քիմիական ածխէ, թթուածնէ և ջրածնէ ։ Հասարակ ածուխ և ադամանդ քիմիական ածխոյ մէն մի ձևերն են ։ Ջուրը բաղադրութիւն է թթուածնի և ջրածնի նոյն համեմատութեամբ որ կը տեսնուի շաքարի մէջ ։ Ուստի կրնայ ըսուիլ թէ շաքարը կը բաղկանայ «հասարակ ածխէ և ջուրէ» ։ Նշահն և փայտ նոյնպէս բաղկացեալ են քիմիական ածխէ, թթուածնէ և ջրածնէ ։ Նշահն և փայտ կրնան փոխուիլ ի շաքար ։ Ասոր դիւրագոյն միջոցն է եփել այն նիւթերը ջրոյ մէջ քիչ մը ծծմբային թթուով ։ Լիտր մը կտաւ կուտայ աւելի քան մի լիտր շաքար ։ Փայտի տաշեղէ և թուղթէ ալ շաքար կրնայ հանուիլ քիմիական գործողութեամբ ։

Բայց կտաւէ հանուած շաքարը ճիշդ նոյն նիւթը չէ որ է եղեգի շաքարը ։ Կան շաքարի շատ տեսակներ, որոց կարևորագոյնք են եղեգի և խաղողոյ շաքարը ։ Կաթէ ալ շաքար կը հանուի և կը գործածուի մանաւանդ ի դեղօրայս ։ Խաղողոյ շաքարը կը հանուի ոչ միայն խաղողէ, այլ և կերասէ, ելակէ, թուզէ, տանձէ, խնձորէ և ուրիշ շատ պտուղներէ ։ Այս նիւթերէն հանուած շաքարը չէ այնչափ քաղցր որչափ եղեգի շաքարը, և ջրոյ մէջ այնչափ դիւրաւ չի լուծուիր ։ Այս շաքարը կը տեսնենք շատ անգամ սառնակերպ (քրիստալացեալ) չամիչի և չոր թզոյ երեսը ։ Այս շաքարը նման է այն շաքարին որ Նշահէ և կտաւէ կը հանուի, և հազարաւոր տակառներով կը շինուի Եւրոպա և Ամերիկա ։ Կը գործածուի անուշարարութեան, խարդախեալ շաքարի, գարեջրոյ, գինւոյ և ալքոհոլի մէջ ։ Ալքոհոլը, շաքարի պէս, կը բաղկանայ քիմիական ածխէ, թթուածնէ և ջրածնէ, և կ'ելլէ միշտ շաքարի տեսակէ մը ։

Եղեգի շաքար չի շինուիր արուեստով, այլ կ'առնուի միայն տնկային հիւթերէ ։ Այսպիսի հիւթոց մէջ շաքարը լուծուած կը գտնուի ջրով, և կ'առնուի սնդացելով, եթէ հիւթը եփուի, և ապա թողուի սառնանալ (քրիսթալանալ) ։ Ով որ նշահէ կամ փայտէ կամ խաղողէ հանուած շաքարը եղեգի շաքարի փոխելոյ ձևն և դիւրին կերպը կը գտնէ, շուտով կրնայ հարստանալ ։

Եղեգի շաքարը սննդարար և առողջարար է, մանաւանդ երբ ուրիշ ուտելեաց հետ կը խառնուի, կամ հասարակ կերակրոյ հետ կ'ուտուի ։ Եթէ լոկ շաքար ուտուի շատ, կամ կերակրոյ մէջ, կրնայ խանգարել ստամոքսը և արգելուլ մարսողութիւնը ։ Ընդհանրապէս վնասակար կը կարծուի ատամանց, բայց այս հաւանականապէս սխալ է ։ Անուշարարաց կամ շաքարագործաց տեսակ տեսակ շաքարեղէնները վնասակար են, վասն զի խառն են ուրիշ նիւթերով, մանաւանդ գունոյ համար թունաւոր նիւթերով ։ Լաւ է զգուշանալ ամէն տեսակ սաստիկ գունաւոր շաքարեղէններէ, նաև այն տեսակներէն որոց մէջ շատ ոգի կամ համեմ կայ ։

---

(1) . — Եթէ ԶԳՕՆԴԱՍ, քննադատեալ յօդուածին հեղինակին պէս, դըպրոցական ընթացքն աւարտելէ տարիներ յետոյ գրամ և ժամանակ վատնած լինէր՝ յատկապէս Յունարէն ուսանելու համար, տարակոյս չունինք որ այդ լեզուին կարևորութեանը վրայ ա՛յսչափ «[illegible]» գաղափարներ չէր յայտներ . . . ։ Ծ. Բ.

(2) . — Հօս ալ ԶԳՕՆԴԱՍԻ տեղեկութիւնքն անորոշ կը թուին ինձ ։ Ո՛չ միայն Ռուսիոյ, այլ բոլոր Եւրոպիոյ բժշկական վարժարանաց մէջ ուսանողք Յունարէն ալ ուսնելու կը պարտաւորուէին երկու որոշ պատճառներով. նախ, հին ժամանակաց Յոյն բժիշկներուն գործերն ուսումնասիրելու համար, և երկրորդ՝ հիւանդութեանց և դեղորէից տրուած Յունական բարդ բառերուն կազմութեան և նշանակութեան տեղեկանալու համար ։ Այժմ, մանաւանդ Ֆրանսայի և Անգլիոյ բժշկական Ֆաքիւլթէներէն ջնջուած է այս ուսում, մանաւանդ որ այդ գործեր Եւրոպական կենդանի լեզուաց թարգմանուած են, գլխաւորապէս Պ. Լիթրէի շնորհիւ . բայց չգիտենք թէ այս պարագայ ինչ կ'ապացուցանէ քննադատեալ յօդուածին պաշտպանած դատին դէմ . . . Ծ. Բ.

Շաքարը փտութենէ կը պահէ, այսինքն չի թողուր որ կենդանական և տնկական նիւթեր ապականին ։ Շաքարով պատեալ թուզեր, սալորներ, ու ուրիշ նիւթեր բուսական ատեն կը պահուին անապական ։ (Աւետաբեր)

ՄՆԱՑԵԱԼ ՀԵՌԱԳԻՐՔ

Թունուզ 2 յուլիս.

Իտալական ընդհանուր հիւպատոս Պ. Մաչիոյ ուրբաթ օրն Իտալիա կ'երթայ։ Իտալական Փարիտի սեպական նաւն և Անգլիական մարտանաւ մը ըՍֆաքս գնացին իրենց ազգակիցները պաշտպանելու։ Սֆաքս ծագած ապըստամբական շարժումն հոն կեդրոնացեալ կը մնայ։ Մոնասթըր և Խայրուան քաղաքներն հանդարտ են ։ Ամեն միջոցք ձեռք առնուեցան Սֆաքսի շարժումը շուտով և ազդուապէս զսպելու համար։

Աթէնք 2 յուլիս.

Սուցոյ զօրավարը գրաւման բանակին ընդհանուր հրամանատար անուանեցաւ ։

Աթէնք 3 յուլիս.

Ցունաստանի թողուած տեղերու յանձնումն սկսաւ ։ Միջազգային յանձնախմբին հրաւէրին վրայ, Օսմ. պահապան զօրքը Փունթայէն քաշուեցաւ, և Հելլենական զօրքը գրաւեց այդ բերդն, որոյ թնդանօթները վերցուցին ։ Ցետոյ, յանձնախումբն հրաւիրեց Սուծոյ զօրավարն որ առաջին նըշանին պատրաստ գտնուի Արթան գըրաւելու ։ Զօրավարն այս ազդն իմացուց իւր կառավարութեան, որ պէտք եղած հրահանգները զրկեց ։ Պ. Եփամինոնտաս Լուրիոթթի Հելլենական լիազօր պատուիրակ կարգեցաւ յանձնըւած առաջին տեղերուն մէջ Հելլենական իշխանութիւնները զետեղելու համար ։

Փիլիպէ 3 յուլիս.

Պէլովայի անտառը շահագործող ընկերութեան տնօրէն Պ. Պըրիժ թող տրուեցաւ աւազակներէն 1200 ոսկւոյ փրկանք մը վճարելով ։ Իսկ թարգմանն առանց փրկանքի արձակեցաւ ։

ԱԶԴ

Շատեր հետաքրքիր են իմանալ թէ Լոյսի մէջ յաճախ տեսնուած ձեւն ստորագրութիւնը մե՞րն է արդեօք ։ Հարկ կը համարիմք ազդարարել թէ մեք բնաւ բան գրած չեմք Լոյսի մէջ, և թէ յիշեալ ստորագրութեան տէրը ճանաչելու պատիւը չունիմք։ Ն. Ճ.

ԱԶԴ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՊԷՇԻԿԹԱՇԻ

Թաղիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ վագըֆէն իսկ. իճարէի կարապետ գալֆա փողոց 2 թիւ 500 կանգուն գետինն Ս. Եկեղեցւոյս մահլիւլ ինկած է, որուն 3000 ղրշ վճարող կայ ։ Ուստի Թաղ. Խորհուրդս' ներկայ պաշտօնական յայտարարութեամբ կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թէ' ով որ յիշեալ գինէն աւելի վճարել կուզէ, պարտի ժամանակէս մինչև 31 օր ամեն կիրակէ առաւօտ 'ի Թաղ. խորհրդարանս դիմել ։

1881 յունիս 21 Պէշիկթաշ (Կնիք)

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ
Կ. ՊՈԼԻՍ ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ

ԸՆՏԻՐ ՔԱՂՄԻՐՆԵՐ ՈՒ ՇԱՅԱՔՆԵՐ

Փոքր Ասիոյ ԿԻՐԻՆԻ տեղական գործարաններէն ելած զուտ բուրդէ դիմացկուն և գեղեցիկ Քաղմիրի և Շայաքի զանազան տեսակներ։

Կը ծախուին Կ. Պոլիս Պահճէ—Գաբու Ղարագօլին դէմի թիւ 5 խանութը ։ 3

ԳՈՐԾԱՐԱՆ ԵԷՆԻՃԷ ԾԽԱԽՈՏԻ
ԳՕՆԹԻ ԵՂԲԱՐՔ ԵՒ ՇԱՀԻՆԻ

109—Կալաթա, Սանտըգճըլար փողոց—109

Ստորագրեալքս առևտրական բոլոր պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով, Քօնթի եղբարց և Շահինի հետ ընկերութեամբ Ղալաթիոյ Սանտըգճըլար փողոցը թիւ 130 գործատունն հաստատելնուս 'ի վեր' արժանապէս քաջալերուեցանք պատուարժան յաճախորդաց բազմութենէն ։ Ամեն ոք լաւ գընահատեց մեր գործարանէն ելած ծխախոտոյն ընտրութիւնը, ճաշակը և գիներուն չափաւորութիւնը տեսակներուն համեմատութեամբ. ուստի և մեզ հարկ եղաւ, աւելի ընդարձակ ասպարէզ մը տալ մեր գործառնութեանց ։

Եւ նախ' մեր գործարանն ու վաճառատունը փոխադրեցինք առաջնոյն դիմացը 109 թիւ շէնքին մէջ, որ իւր անհամեմատ ընդարձակութեամբը խիստ յարմարութիւն ունի թէ մայրաքաղաքէս թէ գաւառներէն և թէ օտար երկիրներէ եկած բազմաթիւ հրամաններըն յոյժ գոհացուցիչ կերպիւ և փութով կատարելու .

Երկրորդ' ծխախոտոյ բերքն արտադրող ամեն կողմ' և մանաւանդ յԷնիճէ յատուկ գործակալներ կարգելով սկսած ենք մասնաւոր խընամօք պատրաստել տալ բերքը և ահա այս խնամոց և զոհողութեանց շնորհիւն է որ այսօր ամենընտիր և հոտաւէտ ծխախոտներ կարող ենք մատակարարել նաև 150նոց, 200նոց, և 300նոց և աւելի բարձր գիներով ըստ տեսակին ։

Այսուհետև ոչ ոք պիտի վարանի իւր ճաշակին յարմար ընտիր ծխախոտ գտնելու մասին, բաւական է դիմել մեր վերոյիշեալ գործատունն 'ի Ղալաթիա Սանտըգճըլըր փողոց թիւ 109, և կամ ամեն ծխավաճառներէ խնդրել մեր գործարանէն ելած ապրանքներէն ։

Ծան. Օտար երկիրներէ ապրանք ուզողները կըմասնակցին այն մենաշնորհին, զոր ունիմք կայսերական կառավարութենէն, որ է պանտրօլի տուրքէն ազատ ըլլալ, որով 0/0 ին 20 շահ կունենան ։

Վաճառատուներն են .
Ղալաթիա Սանտըգճըլար թիւ 109
Ջըրտան գաբու Չէօմլէկճիլէր „ 29
Էմին-Էօնիւ „ 56

ՏԷՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

VICHY

ՀԱՆՔԱՅԻՆ ՋԵՐՄՈՒԿՔ

Վ Ի Շ Ի

(Ֆրանսա, ի գաւառն Ալլիէ)

Սեփականութիւն Ֆրանսական իշխանութեան.

Վարչութիւն, փողոց 22, Պուլվար Մոնմարթր .

SAISON DES BAINS

ԵՂԱՆԱԿ ԲԱՂԱՆԵԱՑ

Վիշիի հաստատութեան' մէջ, որ Եւրոպիոյ ամենէն լաւ զետեղականներէն մին է ամեն տեսակ բաղնիք և տուշ կը գտնուի ի դարմանումն ՍՏԱՄՈՔՍԻ, ԼԵԱՐԴԻ ՓԱՄՓՈՒՇՏԻ հիւանդութեանց, ԱԽԱՋԱԽՏԻ, ՇԱՔԱՐԱԽՏԻ, ՅՕԴԱՑԱՒԻ ՄԻՋԱԿԱՆ ՔԱՐԱԽՏԻ ևն։

Մայիս 15էն սեպտեմբեր 15 ամեն օր գրօսարանին մէջ Թատրոն և Նըւագերգութիւն . — Պարտիզին մէջ երաժշտութիւն . — Ընթերցատուն . — Կանանց յատկացեալ սրահ . — Սրահք խաղերու, խօսակցութեան և գնտախաղերու ։

Բոլոր երկաթուղիք Վիշի կը տանին։
Ամեն տեղեկութեանց համար դիմելու է Ընկերութեան, Պուլվար Մոնմարթր ; թիւ 22, ի Փարիզ ։

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի' բաց 'ի կիրակի և տօն օրերէ ։

Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս, Պահճէ-Գաբու Ճէլալ պէյ խան թիւ 31 Մասիսի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները ։

ԿԱՐԻՆ . Յովհաննէս էֆ. Տ. Մելքիսեդեկեան .
ԵՐԶՆԿԱ . Յ. Շաւարշ էֆ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Երանոս էֆ. Սթամպոլեան .
ՍԱՄՍՈՒՆ . Եղուարդ էֆ. Մուրատեան .
ԿԻՐԱՍՈՒՆ . Գ. էֆ. Խ Մազմանեան .
ՌՈՍՏՈՒԹՕ . Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէսլեան .
ԶՄԻՒՌՆԻԱ . Աբրահամ էֆ. Պերգամալեան ;
ՆԻԿՈՄԻԴԻԱ . Խոսրով էֆ. Էսկիճեան .
ՏՐԱՊԻԶՈՆ . Ս. Էթմէքճեան էֆ
ԵՒԴՈԿԻԱ. Գէորգ էֆ. Նազարեան.
ԽԱՐԲԵՐԴ և ՏԷՐՍԻՄ . Կիրակոս էֆ. Ն. Ղազանճեան .
ՄՈՒՇ. Արմենակ էֆ. Խանդալեանց.
ՎԱՆ . Պետրոս » Գաբամաճեան.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան .
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ Գէորգ էֆ. Կ. Ոսկերչեան
ՖՕՔՇԱՆ. Ֆէրհատ » Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս էֆ. Հէքիմեան։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 22 յունիս .

Օսմ. Քօնս. գոցուեցաւ	—,—
» » բացուեցաւ	17.17
» » կէս օրին	17,11

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

		Անգղ. լիր.
Սօսիէթէ Ժէնրլ. 6 0/0	»	5.20
» Օթօման	»	3.35
Կ. Պոլսոյ Պանքան	»	11.
Քրէտի Ժէնէրալ 6 0/0		6,
Փոխ. 1863 (Մութօն) 6 0/0	Ֆր.	88.
» 1865 (») 6 0/0	»	89,
» 1869 (Բինար) 6 0/0	»	88,
» 1872 (Պօն տիւ թրէզօր)	»	28.
» 1873 (Բինար) 6 0/0	»	86,
Րումէլիի երկաթուղի	Ֆր.	53.50
Լաւրիում	»	136,
Թրամուայ	Օսմ. լիր	380.
Թղթադրամ	»	1020
Հէվալէսիզ		75,
Րէբօր		53

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

(Օսմ. ոսկին 100 ղրշէն)	Ղրշ.
Անգղիական ոսկի	109 30
Գաղղիական »	87 24
Բօլ	90 8
Գրիմից	51 25
Գառայոն թուղթ 8 րուպլի	86 գարիք
Գառայոն արծաթ (Նոր)	92 10
Մէճիտիէի տարբերութիւն	8 1
Վեցնոց	126 35
Հինգնոց	210 20
Հինգնոց (անկէտ)	178
Մէթալիք	205
Պղինձ (անուանական)	750

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 2 յուլիս .

Անգղ. Քօնս.	101 7/16
Օսմ. »	16 1/4
Փոխ. 1865	19
» 1869	18 1/4
» 1871	78 1/2
» 1872	30 1/4
» 1873	18 1/8
» 1877	91
Պանք Օթօման	15 9/8
Ռուս. փոխ. 73ի	90 1/4
Եգիպտ. միացեալ	77 7/8
» արտօնաւոր	98 3/8
Տայրա Սանիէ	76 1/4
Փոխ. Ռօշիլտ	77 1/8
Փոխանկագիր Փարիզի վրայ	

Փարիզ 2 յուլիս .

Դաղղ. Քօնս. 5 0/0	119 32 1/2
» » 3 0/0	85,97 1/2
Օսմ. Քօնս.	16 55
Փոխ. 1865 Ֆր.	92
» 1869	92.
» 1873	86.
Օսմ. Երկաթուղի	54.75
Պանք Օթօման	660.
Քրէտի Լիօնէ	950.
Ռուս. փոխ. 5 0/0 (1877)	95 7/8
» » Արևելեան	60 1/2
Իտալ. Քօնս.	93.85
Եգիպտ. միացեալ	392.50
Փոխանկագիր Լոնտ. վրայ	25.29

Վիեննա 2 յուլիս.

Փոխ. Լոնտրայի վրայ	116 90
Րումէլիի երկաթուղի	26.70

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1881 ՅՈՒՆԻՍ 1 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍ 30

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Եւրոպական եզերք	Թիւ
10 45	Եէնիմահալլէէն Մէզարպուրնու, Պիւյիւքտէրէ, Թարապիա Եէնիքէօյ Սթէնեա. Պօյաճըքէօյ. Ր. Հիսար. Պէպէք. (Արնաւուտ գիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի.)	20
11 30	Ր. և Ա. Գավաք. Եէնիմահալլէ Մէզարպ. Պիւյիւքտէրէ. Թարապեա. Եէնիք. Էմիրկեն, Ր. Հիսար, Պէպէք. Արնաւ.	33
12 45	Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէյիւքտ. Թարապիա. Եէնիքէօյ, Պօյաճըքէօյ, Ր. Հիսար, Պէպէք ։	32
1 45	Եէնիմահ. Մէզարպ. Պէյիւքտէրէ. Քիրէճպուրնու, Թարապեա. Եէնիք Սթէնեա, Էմիրկէն. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Օրթաք.	18
3	Եէնիմահ. Մէզր. Պէյիւքտ. Թարապ. Եէնիք. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնաւ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ ։	20
4	Եէնիմհ. Մէզրպ. Պէյիւքտ. Թարապ. Եէնիքէօյ, Սթէնիա, Միրկեօն, Պօյաճ. Ր. Հիսար Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Սիրքէճի։ (Ուրբաթ օրերը Սիրքէճի չպիտի հանդիպի։)	33
5	Եէնիմահ. Մէզար. Պէյիւքտ. Թարպ. Եէնիք. Սթէն. Էմիրկէն, Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկթաշ ։	34
6 15	Եէնիմահալլէ. Պէյիւքտ. Թարապիա. Պէյքօզ Բաշապ. Եէնիք. Էմիրկ. Գանլըճա. Ր. և Ա. Հիսար. Գանտ. Արնավուտքէօյ, Չէնկէլք. Պէյլէր. Օրթաքէօյ, Գուզկունճուք. Պէշիկթաշ. Իւսկիւտար ։	1
8	Ա. և Ր. Գավաք . Եէնիմահալլէ. Մէզարպուրնու. Պէյիւքտէրէ Թարապեա. Պէյքօզ. Եէնիքէօյ. Էմիրկէն. Պօյաճըքէօյ. Ր. Հիսար, Պէպէք, Անավուտքէօյ. Գուրուչէշմէ. Օրթաքէօյ. Պէշիկթաշ. (Ուրբաթ օրերը Սթէնեա) ։	32
10	Մէզարպուրնուէն Պէյիւքտէրէ. Թարապիա. Եէնիքէօյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավուտքէօյ. Օրթաքէօյ. Պէշիկթաշ ։	19
	Արնաւուտքէօյէն	
10 45	Արնավուտքէօյ. Գուրուչէշմէ. Օրթաքէօյ. Պէշիկթաշ. Գապաթաշ։	22
11 15	Արնավուտքէօյ, Գուրուչէշմէ. Օրթաքէօյ. Պէշիկթաշ։	1
11 45	Պէպէք, Արնավուտքէօյ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ. Գապաթաշ ։	19
12 30	Արնավուտքէօյ. Գուրուչ. Օրթաքէօյ. Պէշիկթաշ.	22
1 15	Արնավուտքէօյ, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ.	19
2	Պէպէք, Արնավ . Գուր. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։	22
	Ասիական եզերք	
10 45	Արնավուտքէօյ. Վանիքէօյ. Չէնկէլքէօյ. Պէյլէրպէյ. Գուզկունճուք. Գապաթաշ ։	23
11 15	Պէյքօզ, Բաշապահճէ, Ր. Փ. մահ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիքէօյ, Չէնկէլքէօյ, Պէյլէրպէյ ։	21
12 15	Պէյլէրպ. Գուզկունճուք, Պէշիկթաշ։	23
12 15	Պէյիւքտէրէ. Թարապ. Պէյքօզ, Բաշապահճէ. Գանլըճա. Ա. Հիսար, Գանտիլլի. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ. (Ուրբ. ժամ 1ին)	34
1 30	Պէյիւքտ. Թար. Պէյքօզ, Բաշապ. Ր. Փ. մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլէր. Գուզկ. Իւսկ. (Բաց ի ուրբաթէ ։)	17
3 45	Պէյքօզ Բաշապ. Ր. Փաշա մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտիլ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Սիրքէճի. (Ուրբ. օրերը ժամ 4ին Մէզր.՝ Պէյիւքտ. հանդիպելով Սիրքէճի չպիտի հանդիպի)։	21
8 45	Պէյիւքտ. Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտիլլի. Վանիք. Չէնկէլքէօյ Պէյլէրպէյ. Գուզկունճ Իւսկիւտար։ (Ուրբաթ օրերը Ր. Փ. մահ. հանդիպելով։)	23
11	Պէյլէրպէյէն ուղղակի կամուրջ։	22

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Եւրոպական եզերք	Թիւ
12 45	Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավուտք. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիքէօյ, Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։	20
12 30	Գապաթաշ. Իւսկիւտար. Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաք. Պէյլ. Չէնկ. Արնվ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլճ. Էմիրկէն, Եէնիք Բաշապ. Պէյքօզ Թարապ. Պէյիւք. Եէնիմահ։	1
2	Գապաթաշ, Պէշիկ. Օրթ. Գուր. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճըքէօյ, Եէնիքէօյ, Թար. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։	33
3 15	Պէշիկթաշ, Օրթ, Գուր. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն. Եէնիք. Թար. Պէյիւքտէրէ, Մէզար. Եէնիմահ։	34
5	Պէշիկ. Օրթաք. Գուրուչէշմէ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Պօյաճ. Էմիրկէն. Եէնիք. Պէյքօզ, Թար. Պէյիւք. Մէզարպուրնու. Եէնիմահալլէ. Գավագլար .	32
6 30	Իւսկ. Պէշիկթաշ. Գուզկունճուք. Օրթաքէօյ. Պէյլէրպէյ. Չէնկէլքէօյ, Արնավուտքէօյ, Գանտ. Ա. և Ր. Հիսար. Գանլ. Էմիրկ. Եէնիքէօյ, Թարապիա, Պէյիւքտ ։	23
8	Պէշիկ. Օրթաք. Արնավուտք. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եէնիք. Թարապեա. Պէյիւքտէրէ, Մէզարպուրնու.	19
9 15	Պէշիկթաշ, Օրթաք. Գուր. Արնվ. Պէպէք. Ր Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թար. Մէզր. Եէնիմահ. (Ուրբաթ օրերը ժամ 9ին)	20
10	Պէպէք. Ր Հիսար, Պօյաճ. Եէնիք. Թարապ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահալլէ ։	33
10 30	Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Էմիրկէն, Սթէն. Եէնիք. Թարապ. Քիրէճպ. Պէյիւքտ. Մէզ. Եէնիմահ։	18
11 10	Պէպէք. Ր. Հիսար, Պօյաճ. Սթէն. Եէնիք. Թարպ. Պէյիւքտ. Մէզարպ. Եէնիմահ։ (Հարաւային հովերուն Սթէնեա չհանդիպիր) ։	32
	Արնաւուտքէօյ	
11 45	Պէշիկ. Արնավուտքէօյ ։	22
12 45	Ուղղակի »	19
1 30	» Պէպէք	22
11 5	Գապաթաշ, Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավուտ.	23
11 40	Պէշիկ. Օրթաք. Գուրչ. Արնավ. Պէպէք։	19
12	Պէշիկթաշ. Օրթաք. Գուրուչ. Արնավ։	1
	Ասիական եզերք	
11 45	Ուղղակի Պէյլէրպէյ.	1
2	Իւսկիւտ, Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապահճէ, Պէյքօզ։ (Ուրբաթ օրերը Ր. Փ. մահ. Պէյիւքտ. Մէզր)։	21
9 30	Գապաթ. Գուզկ, Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլճ. Բաշապ. Պէյքօզ, Թար. Մէզր. Գավագլար։ (Ուրբ. օրերը ժամ 10ին)	34
10 30	Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար, Գանլճ. Ր. Փաշա մահ. Բաշապ. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքտ։ (Բաց ի ուրբաթէ)	17
10 25	Պէշիկթաշ. Գուզկունճուք, Պէյլ.	22
11 5	Պէյլէրպէյ. Չէնկէլք. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. Փ. մահ. Բաշապ. Պէյքօզ։	21
11 40	Գապաթ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Արնավ.	22